ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/52

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ Սյունիքի մարզ Սիսիանի համայնքապետարան

Մասնակից՝ «Սիսիանի Հաց» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

ՀՀ Սյունիքի մարզ Սիսիանի համայնքապետարանի ներկայացուցիչ՝ Ն. Կիրակոսյանի,

«Սիսիանի Հաց» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ի. Միրզոյանի, ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյանի, Ա. Պարանյանի:

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցում, ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների և բնակավայրերում գործող խմբերի կարիքների համար սննդի ձեռքբերում:

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.1», «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.2», «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.3» և «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.4»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 18.02.2020թ.-ի թիվ 26/26-1/2217-2020, 26/26-1/2214-2020, 26/26-1/2274-2020 և 26/26-1/2283-2020 գրություններով «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Սյունիքի մարզ Սիսիանի համայնքապետարանի 17.02.2020թ. թիվ 302, 303, 304 և 305 նույնաբովանդակ գրությունների հիման վրա, 18.02.2020թ.-ին «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 18.02.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/52 համարի ծածկագիրը և 19.02.2020թ.-ին հրապարակվել www.gnumner.am կայքում:

25.02.2020թ.-ին, 06.03.2020թ.-ին և 19.03.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 06.03.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 19.03.2020թ.-ին:

2. ՀՀ Սյունիքի մարզ Սիսիանի համայնքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ Սյունիքի մարզ Սիսիանի համայնքապետարանը 17.02.2020թ. թիվ 302, 303, 304 և 305 նույնաբովանդակ գրություններով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով, որ տրամադրում է «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.1», «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.2»,

«ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.3» և «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.4» պայմանագրի շրջանակներում պահանջվող փաստաթղթերը: Միաժամանակ տեղեկացրել է, որ պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը տեղեկագրում հրապարակվել է 2020 թվականի փետրվարի 11-ին:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուի ներկայացուցիչը ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին՝ բանավոր կերպով պնդելով ներկայացված հանգամանքները:

3. <u>«Սիսիանի Հաց» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 17.02.2020թ.-ի գրությամբ դիմել է «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.02.2020թ.-ի թիվ 26/26-1/2217-2020, 26/26-1/2214-2020, 26/26-1/2274-2020 և 26/26-1/2283-2020 գրություններով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը ներկայացնելով գրավոր դիրքորոշում՝ հայտնել է հետևյալը.

«2019թ. դեկտեմբերի 19-ին «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) և ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) միջև կնքվել է "Սննդի" մատակարարման «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.1», «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.2», «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.3» և «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.4» ծածկագրերով պայմանագրեր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրերի 1.1. կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 և N 2 Հավելվածներով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7. կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա. Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ. Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 /երկու/ օրից ավելի:

«Սիսիանի հաց» ՍՊԸ-ին ուղղված 10.02.2020թ. թիվ 252 գրությամբ (կցվում է) ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքապետարանը նշված պայմանագիրը միակողմանի լուծել է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 և 2.1.7.1 կետերի պահանջները:

Այնուհետև, ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքապետարանը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի պահանջներով, ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ ներկայացրել է «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար:

“Գնումների մասին” ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի “ա” ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն հայտնել ենք, 2019թ. դեկտեմբերի 19-ին «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի և ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի միջև կնքվել է “Սննդի” մատակարարման թվով 4 հատ պայմանագիր /«ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.1», «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.2», «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.3» և «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.4»/:

Վերը նշված պայմանագրերը ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի կողմից 10.02.2020թ. թիվ 252 գրությամբ միակողմանի լուծվել է՝ հիմք ընդունելով սույն Պայմանագրի 2.1.7 և 2.1.7.1 կետերի պահանջները, ըստ որի Գնորդն իրավունք ունի

միակողմանի լուծել պայմանագիրը, եթե մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում և/կամ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի:

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի 16.01.2020թ. թիվ 61 և 03.02.2020թ. թիվ 191 գրություններով հայտնել է, որ Ձեր կողմից ներկայացված սերտիֆիկատում նշված արտադրողի անունը՝ «Սվետլովոդսկի», իսկ ապրանքի անվանումը՝ «Դիվո» ապրանքանիշի «Կրեստյանսկոյե» 72,5% կարագ, չի համապատասխանում մատակարարված կարագի արկղի վրա գրվածին, ինչպես նաև նշված չէ արտադրման ամսաթիվը, իսկ ներկրողի տվյալները փակցված են արտադրողի պիտակի վրա: Ակնհայտ է, որ կարագի որակը, փաթեթավորումը և ժամկետները չեն համապատասխանում պայմանագրով նախատեսվածին, ինչը հաստատվել է նաև ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից:

Եվ ելնելով վերոգրյալից խնդրել տալ պարզաբանում ... /կցվում է/:

Ի պատասխան վերը նշված գրության՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից 06.02.2020թ. ներկայացվել է պարզաբանում, որով մասնավորապես հայտնել ենք.

«Հարգելի Պարոն Սարգսյան, ի պատասխան Ձեր՝ 03.02.2020թ. թիվ 61 գրությանը, հայտնում ենք՝ նախքան թիվ 61 գրությանն անդրադառնալն, անհրաժեշտ ենք համարում, որպես հիշեցում ակնարկել, (31.01.2019թ. «Սիսիանի հաց»ՍՊԸ-ն Սիսիանի համայնաքապետարանի էլ. փոստին ուղարկված գրությամբ խնդրել էր հնարավորինս սեղմ ժամկետներում էլեկտրոնային եղանակով տրամադրել 02.02.2018թ. Սիսիանի համայնքապետարանի կողմից հայտարարված ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի կատարման մասին տեղեկատվություն՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ)դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալ այդ տեղեկատվությունը:

Վերոնշյալ պայմանագրի շրջանակներում մատակարարված տավարի փափկամսի ողջ խմբաքանակի

-սպանդանոցային ծագումը հավաստող փաստաթղթերը,

-դուրս գրված հաշվարկային բոլոր փափստաթղթերը,

-փոխադրող մեքենայի մասին տեղեկատվություն:) գրությունը մինչ օրս անպատասխան է:

2020թ. հունվարի 17-ին «Սիսիանի հաց «ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին թիվ 61 գրությունն ստանալուն պես, կազմակերպության տնօրենն, ի դեմս Ի. Միրզոյանի ահազանգել է Ա/Ձ Վիգեն Ստեփանյանին (վերջինիս հետ «Սիսիանի հաց»ՍՊԸ-ն 25.06.2019թ. կնքել է պայմանագիր սերուցքային կարագ յուղայնությունը՝ 71,5-82,5%, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0,7 գ, ածխաջուր 0,7 գ, 740 կկալ 200-250 գ կամ 20-25 կգ գործարանային փաթեթներով, ԳOUS 37-91 կամ համարժեք: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածին համապատասխան, ձեռք բերելու նպատակով) պայմանագիրը կցվում է (3 էջ): 2020 թ. հունվարի 20-ին (ս.թ. հունվարի 18, հունվարի 19 համապատասխանաբար շաբաթ, կիրակի) «Սիսիանի հաց» ՍՊԸ տնօրեն Ի. Միրզոյանը,Ա/Ձ Վ.Ստեփանյանը, ՀՀ կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության պետական մարմնի Սյունիքի մարզի քաղաք Սիսիանի սննդամթերքի անվտանգության տեսուչ Արա Ղազարյանը, սննդամթերքի անվտանգության տեսուչ Վլադիմիր Հովհաննիսյանը, Սիսիանի համայնքապետարանի ներկայացուցիչ Վ.Իվանյանը այցելել են Սիսիանի հայնքի թիվ 1 ՆՈՒՀ՝ «Սիսիանի հաց «ՍՊԸ-ի կողմից մատակարարված կարագի շուրջ ծավալված խոսակցությունները տեղում պարզաբանելու նպատակով: Հարկ ենք համարում նշել նաև այն հանգամանքը, որ Սիսիանի համայնքի թիվ 1 ՆՈՒՀ-ի տնօրեն Ա.Գասպարյանը տեսնելով այնտեղ ներկա գտնվող Ա/Ձ Վ.Ստեփանյանին՝ հայտարարել է, թե չի ցանկանում վերջինիս հետ գործ ունենալ, չնայած այն հանգամանքին,որ Ա/Ձ Վ. Ստեփանյանն է հանդիսանում մատակարարված կարագի ներկրողը ՀՀ և ինքն է պատասխանատու իր կողմից ներկրված կարագի որակի համար:

Գտնվելով Սիսիանի համայնքի թիվ 1 ՆՈՒՀ-ում սննդի անվտանգության տեսուչները՝ Արա Ղազարյան,Վլադիմիր Հովհաննիսյանը ,ուսումնասիրել, ինչպես նաև համտեսել են «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից մատակարարված կարագը, ինչի արդյունքում արտասովոր, կասկածելի համ ու հոտ չի արձանագրվել: Սակայն «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի տնօրեն Ի.Միրզոյանի առաջարկով հետագայում կասկածներ չունենալու նպատակով վերոնշյալ անձանց ներկայությամբ կարագից վերցրել են փորձանմուշ՝ համապատասխան փորձաքննության ուղարկելու համար: Փորձանմուշի համար առանձնացված կարագը դրվել է նախկինում արդեն իսկ ինչ-որ անհայտ նպատակներով օգտագործված պոլիէթիլենային տոպրակի մեջ և հանձնվել սննդի անվտանգության տեսուչ Ա.Ղազարյանին և Վլադիմիր

Հովհաննիսյանին: Հարկ ենք համարում հավելել, որ «Սիսիանի հաց «ՍՊԸ-ն մինչ օրս չի ստացել 20.01.2020թ-ին որպես փորձանմուշ վերցրած կարագի վերաբերյալ փորձաքննությանն վերաբերող որևիցե փաստաթուղթ: Ս.թ. հունվարի 24-ին ՍՊԸ-ի տնօրեն Ի.Միրզոյանը զանգահարել է սննդի անվտանգության տեսուչ Ա.Ղազարյանին՝ փորձաքննության արդյունքների մասին տեղեկատվություն ստանալու նպատակով, սակայն վերջինս պարզաբանել է, թե փորձանմուշը դեռ չի փոխանցվել համապատասխան լաբորատորիա, քանի որ Սիսիանի համայնքում գործող ՆՈՒՀ-երում դիտարկում է ընթանում և դիտարկման վերաբերյալ փաստաթղթերը նույնպես պետք է կցվեն փորձանմուշ կարագին (ինչն արդեն իսկ կասկածի տեղիք է տալիս): Հարկ ենք համարում նշել նաև այն հանգամանքը, որ ՍՊԸ-ի աշխատակից Ա.Ղուկասյանը պարբերաբար Սիսիանի համայնքի ՆՈՒՀ-երի աշխատակիցներից հետաքրքրվել է մատակարարված կարագի, ինչպես նաև մատակարարված բոլոր մթերքների որակի վերաբերյալ, ինչի արդյունքում կարագի համի և հոտի մասով բողոք չի ստացվել, մի քանի ՆՈՒՀ-ից դժգոհել են կարագի կտրելու անհարմարության վերաբերյալ:

Անդրադառնալով կարագի փաթեթավորմանը և ժամկետին, հարկ ենք համարում նշել, որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից մատակարարված կարագի տուփի վրա նշված է եղել և արտադրության ժամկետը, և պահպանման ժամկետը, ինչպես նաև մակնշումը (նկարը կցվում է)՝ տվյալ նկարն ուղարկվել է նաև սննդի անվտանգության տեսուչ Ա.Ղազարյանին:

Ըստ 19.12.2019թ.-ին կնքված «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.1», «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.2», «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.3», «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.4» ծածկագրերով սննդի մատակարարման գնման պայմանագրերում կարագի տեխնիկական բնութագրի նախատեսվում է մատակարարել սերուցքային կարագ, յուղայնությունը՝ 71,5-82,5%, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0,7 գ, ածխաջուր 0,7 գ, 740 կկալ 200-250 գ կամ 20-25 կգ գործարանային փաթեթներով, ԳՕՍՏ 37-91 կամ համարժեք կարագ: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված:Մեր կազմակերպությունն ուսումնասիրել է Ա/Ձ Վ.Ստեփանյանից ձեռք բերած կարագի տուփի վրա փակցված մակնշումը, որը համապատասխանել է 19.12.2019թ.-ին կնքված «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.1», «ՍՄՍՀ-

ԳՀԱՊՁԲ-20/1-1.2», «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.3»,»ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.4» ծածկա¬գրե-րով սննդի մատակարարման գնման պայմանագրերում կարագի տեխնիկական բնութագրին;

Անդրադառնալով Ձեր կողմից ներկայացված (ներկրողի տվյալները փակցված են եղել արտադրողի պիտակի վրա) մեջբերմանը, նշենք, քանի որ չենք տիրապետում այդ ընթացքում ՌԴ-ից ապրանքների ներկրման իրականացման գործընթացի օրինական կարգին, հետևաբար պարզաբանում ենք պահանջել ներկրող Ա/Ձ Վ. Ստեփանյանից, վերջինս էլ պարզաբանել է, որ ՌԴ-ից ապրանքի ներկրման ժամանակ պատկան մարմինների կողմից է փակցվել տվյալ պիտակը:

20.01.2020թ-ից Սիսիանի համայնքի ՆՈՒՀ-երին «Սիսիանի հաց «ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է 19.12.2019թ. կնքված «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.1»,»ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.2»,»ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.3»», ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.4» ծածկագրերով սննդի մատակարար¬ման գնման պայմանագրերով նախատեսված կարագի տեխնիկական բնութագրին համապա¬տաս¬խան կարագ (Որակի համապատասխանության հավաստագիրը կցված է) տեղական արտադրության կարագ»:

Այնուհետև ի լրումն 06.02.2020թ.՝ սույն թվականի 12.02.2020թ. «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից նորից գրություն է ներկայացվել ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավար՝ Ա. Սարգսյանին որով մասնավորապես հայտնել ենք.

«Հարգելի Պարոն Սարգսյան, ի լրումն 06.02.2020թ. Ձեզ հասցեագրած գրությանը հայտնում ենք, որ Սիսիանի ՆՈՒՀ-երից ստացել ենք բանավոր տեղեկություն, որ Ձեր կողմից 20-րդ չափաբաժնի՝ կարագի, մասով պայմանագրերը լուծվել են:

Կրկին անգամ հայտնում ենք Ձեզ, որ 2020թ. հունվարի 17-ին «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն էլեկտրոնային հասցեին Ձեր կողմից ուղղարկված թիվ 61 գրությունը ստանալուն պես, կազմակերպության տնօրենն, ի դեմս Ի. Միրզոյանի, ահազանգել է Ա/Ձ Վիգեն Ստեփանյանին (վերջինիս հետ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն 25.06.2019թ. կնքել է սերուցքային կարագի մատակարարման պայամանագիր) և 2020 թ. հունվարի 20-ին Ի. Միրզոյանի նախաձեռնությամբ (ս.թ. հունվարի 18, հունվարի 19 համապատասխանաբար շաբաթ, կիրակի) Ա/Ձ Վ. Ստեփանյանը, ՀՀ կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության պետական մարմնի Սյունիքի մարզի քաղաք Սիսիանի սննդամթերքի անվտանգության տեսուչ Արա Ղազարյանը, սննդամթերքի անվտանգության տեսուչ Վլադիմիր Հովհաննիսյանը, Սիսիանի համայնքապետարանի ներկայացուցիչ, համայնքի ղեկավարի տեղակալ՝ Վ. Իվանյանը այցելել են Սիսիանի համայնքի թիվ 1 ՆՈՒՀ՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից մատակարարված կարագի շուրջ ծավալված խոսակցությունները

տեղում պարզաբանելու նպատակով, որտեղ Ի. Միրզոյանը հայտարարել է, որ կարագը պետք է ուղղարկվի փորձաքննության, իսկ առկա կարագը հենց այդ պահին կարող է փոխարինվել տեխնիկական բնութագրին համապատասխան այլ արտադրողի կարագով, մինչև այս հարցի պարզաբանումը:

Նույն օրը (20.01.2020թ.) բոլոր ՆՈՒՀ-երից ստացվել են ապրանքի մատակարարման պահանջագրեր և ըստ ուղղարկված պահանջագրերի՝ բոլոր ՆՈՒՀ-երին մատակարարվել է տեխնիկական բնութագրին համապատասխան այլ ֆիրմայի կարագ: Այնուհետև 29.01.2020թ., 03.02.2020թ. և 10.02.2020թ. համայնքի բոլոր ՆՈՒՀ-երից կրկին անգամ ստացվել են կարագի մատակարարման նոր պահանջագրեր, որոնց հիման վրա մատակարարումները ամեն շաբաթ սահմանված կարգով կատարվել են:

Նման պայմաններում ընկերության համար առնվազն անհասկանալի է, թե ինչպես կարող էր Ձեր կողմից լուծվել պայմանագիրը, չէ որ նախկին մատակարարված կարագը փոխարինվել է տեխնիկական բնութագրին համապատասխան այլ արտադրողի կարագով և կարագի մատակարարման գործնթացը չի խաթարվել:

Համաձայն գնման պայմանագրերի համապատասխան կետերի՝

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.:

Հարգելի պարոն Սարգսյան, ընկերությունը շուրջ 20 տարի է հանդիսանում է Սիսիան համայնքում գործող ՆՈՒՀ-ների տարբեր տեսակի սննդամթերքի մատակարար, Դուք պաշտոնավարում եք 2015թ-ից և Ձեր պաշտոնավարման առաջին իսկ տարուց մինչև հիմա ընկերությունը ստիպված է եղել 5 անգամ դիմել ֆինանսների նախարարության" գնումների բողոքարկման խորհուրդ իր իրավունքները պաշտպանելու համար, որոնցով հիմնավորվել և բավարարվել են ընկերության ներկայացրած բողոքները:

Հարգելի պարոն Սարգսյան, ընկերությունը ունենալով տեղեկություն, որ Սիսիանի ՆՈՒՀ-երին մատակարարվել է, ՈՉ սպանդանոցային ծագման փափկամիս 26.06.2018թ և 31.01.2019թ. /գրությունները կցվում են/ գրությամբ դիմել է Սիսիանի համայնաքապետարանին՝ խնդրելով հնարավորինս սեղմ ժամկետներում էլեկտրոնային եղանակով տրամադրել 02.02.2018թ. Սիսիանի համայնքապետարանի կողմից հայտարարված ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի

արդյունքում կնքված պայմանագրի կատարման մասին տեղեկատվություն՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ)դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալ այդ տեղեկատվությունը:

Վերոնշյալ պայմանագրի շրջանակներում մատակարարված տավարի փափկամսի ողջ խմբաքանակի

-սպանդանոցային ծագումը հավաստող փաստաթղթերը,

-դուրս գրված հաշվարկային բոլոր փափստաթղթերը,

-փոխադրող մեքենայի մասին տեղեկատվություն: Գրությունը մինչ օրս անպատասխան է:

Չորրորդ անգամ խնդրում ենք օրենքով սահմանված կարգով տրամադրել վերոնշյալ տեղեկատվությունը:

Ինչպես նաև խնդրում ենք պարզաբանել արդյոք Ձեր կողմից կարագի մասով պայմանագրերը լուծվել են:

«Սիսիանի հաց» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/52 ընթացակարգի հիմքերը քննելիս՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությանն ենք հրավիրում հետևյալ հանգամանքի վրա.

«Սիսիանի հաց» ՍՊԸ-ին ուղղված 10.02.2020թ. գրության համաձայն՝ ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքապետարանը վերը նշված պայմանագրերը միակողմանի լուծել է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 և 2.1.7.1 կետերի պահանջները:

25.06.2019թ. «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի և Ա/Ձ Վիգեն Ստեփանյանի միջև կնքվել է սերուցքային կարագի մատակարարման պայամանագիր և այն, որ «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.1», «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.2», «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.3» և «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.4» ծածկագրերով պայմանագրերի շրջանակներում մատակարարված սերուցքային կարագները «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն գնում էր Ա/Ձ Վիգեն Ստեփանյանից՝ սերուցքային կարագի շուկայական գնին հավասար, ս.թ. հունվարի 20-ին «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի տնօրեն Ի. Միրզոյանի նախաձեռնությամբ Ա/Ձ Վ. Ստեփանյանը նույնպես ներկա է եղել Սիսիանի համայնքի թիվ 1 ՆՈՒՀ-ին մատակարարված կարագի շուրջ ծավալված խոսակցություններին՝ պարզաբանումներ տալու նպատակով, որից հետո պարզվել է, որ սերուցքային կարագի անպատշաճությունը արձանագրվել է միայն անհարմար կտրելու մեջ:

Սակայն՝ միևնույն ժամանակ ապրանքների մատակարարումները շարունակվել են 10.02.2020թ., 12.02.2020թ., 17.02.2020թ., 24.02.2020թ., որոնց հավաստման համար Պայմանագրի համաձայն կազմվել են համապատասխան արձանագրություններ:

Ապրանքի մատակարարման վճարումները Պատվիրատուի կողմից մինչ օրս չեն իրականացվել, մինչդեռ առկա են համապատասխան հանձնման-ընդունման արձանագրությունները և կից փաստաթղթերը:

Այսպիսով, պայմանագրերի կատարման փուլում Պատվիրատուն հաշվի չառնելով, որ Պայմանագրերը «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին ուղղված 10.02.2020թ. թիվ 252 գրությամբ միակողմանիորեն լուծվել է հենց իրենց կողմից, շարունակել է Ընկերությունից պահանջել մատակարարումները՝ 10.02.2020թ., 12.02.2020թ., 17.02.2020թ., 24.02.2020թ., սակայն մատակարարված ապրանքի համար մինչ օրս չի կատարել սահմանված վճարումները՝ դրանով իսկ խախտելով Պայմանագրային իր պարտավորությունները, այսինքն թույլ է տվել Պայմանագրի էական խախտում:

Վերոնշված փաստական հանգամանքերը փաստում են, որ Պայմանագրերը միակողմանիորեն լուծելուց հետո՝ այն է 2020թ. փետրավրի 10-ը՝ «Սիսաիանի Հաց» ՍՊԸ-ն շարունակել է «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.1», «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.2», «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.3» և «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.4» ծածկագրերով պայմանագրերի շրջանակներում մատակարարել ապրանքներ, որը Պատվիրատուի կողմից ընդունվել են, սակայն՝ մատակարարած մեծաքանակ ապրանքների համար վճարումներ ընդհանրապես չեն կատարվել:

Անհասկանալի է դառնում, թե ինչու Սյունիքի համայնքապետարանի կողմից 2020թ. փետրվարի 10-ին միակողմանի լուծվել է պայմանագիրը՝ այն էլ 2.1.7 և 2.1.7.1 կետի հիմքերով, որով նախատեսվել է, որ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողի կողմից մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում և ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 /երկու/ օրից ավելի: Ավելին, 2020թ. փետրվարի 10-ին լուծելով վերոհիշյալ պայմանագրերը, այնուամենայնիվ, նշված Պայմանագրերի շրջանակներում 2020թ. փետրվարի 10-ից մինչ օրս շարունակվում են ընդունել «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքները (տե՛ս՝ կցված հանձնման-ընդունման ակտերը):

Գտնում ենք, որ Սիսիանի համայնքապետարանը 2020թ. փետրվարի 10-ին իրավունք չուներ միակողմանի լուծել պայմանագիրը՝ պայմանագրի 2.1.7 և 2.1.7.1 կետերի

ուժով, քանի որ ի սկզբանե՝ Վաճառողի կողմից ապրանքի մատակարարման ժամկետները չեն խախտվել 2 /երկու/ օրից ավելի ժամկետով, իսկ Պատվիրատուի կողմից չհիմնավորված անպատշաճ որակի ապրանք մատակարարելու հիմքով՝ հայտնում ենք, որ հնարավոր էր մի քանի ժամում անպատշաճ որակի ապրանքը փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում և եթե Պատվիրատուն գտնում է, որ «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ի կողմից կողմից մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում, ապա ինչու է պայմանագիրը միակողմանի լուծելու հետո Պատվիրատուն շարունակել ընդունել այդ անպատշաճ որակի ապրանքը:

Վերոհիշյալի արդյունքում Սյունիքի համայնքապետարանը ոչ միայն ինքն է թույլ տվել նշված պայմանագրի էական խախտում՝ չվճարելով մատակարարված և ընդունած ապրանքի դիմաց, այլ նաև միակողմանի լուծելով պայմանագիրը՝ «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ին կանգնեցրել է «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու վտանգի առջև:

Վերոհիշյալից ակնհայտ է դառնում, որ հենց պայմանագիրը միակողմանի լուծող կողմը՝ Սյունիքի համայնքապետարանը, թույլ է տվել պայմանագրի էական խախտում, սակայն այս գործի շրջանակներում միայն «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ին է փորձում ներկայացնել որպես պայմանագրով նախատեսված պարտավորությունների խախտում թույլ տված կողմ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը, կողմերից մեկի պահանջով, կարող է փոփոխվել կամ լուծվել դատարանի վճռով միայն մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում: Էական է ճանաչվում կողմերից մեկի թույլ տված պայմանագրի խախտումը, որը հանգեցնում է մյուս կողմի համար այնպիսի վնասի, որն զգալիորեն զրկում է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս:

Հիմք ընդունելով նաև այն հանգամանքը, որ Ընկերությունը մինչ օրս կատարում է մատակարարումներ /ընդ որում, հենց Պատվիրատուի պահանջով/, որը փաստվում է համապատասխան հանձնման-ընդունման ակտերով՝ ուստի պետք է արձանագրել, որ Պատվիրատուն ըստ էության չի առարկում այն հանգամանքը, որ Վաճառողի կողմից մատակարարված անպատշաճ որակի ապրանք փոխարինվել է Գնորդի համար ընդունելի ժամկետում /տես՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի ա ենթակետ/, քանի որ Պայմանագրի միակողմանի լուծումից հետո՝ Պատվիրատուն փաստացի ընդունել է մատակարարումները,

ստորագրել հանձնման-ընդունման ակտերը, որի հիման վրա էլ պարտավոր է կատարել վճարումներ:

Արդյունքում ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի կողմից պայմանագրային պարտավո-րությունների ոչ պատշաճ կատարման, թույլ տված անգործության հետևանքով «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն հայտնվել է "Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում" ներառվելու վտանգի առջև:»:

Ելնելով վերոգրյալներից Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որեէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

4. <u>ՍՑ-LO-2020/52 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ Սյունիքի մարզ Սիսիանի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ի միջև 19.12.2019թ.-ին կնքվել են թիվ «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.1», «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.2», «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.3» և «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.4» ծածկագրով պետական գնման պայմանագրեր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ով 20-րդ չափաբաժնի մասով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է մատակարարման ենթակա «կարագ» ապրանքատեսակը պետք է լինի հետևյալ պայմաններին համապատասխան.

Սերուցքային, յուղայնությունը՝ 71,5-82,5%, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0,7 գ, ածխաջուր 0,7 գ, 740 կկալ 200-250 գ կամ 20-25 կգ գործարանային փաթեթներով, ԳՕՍՏ 37-91 կամ համարժեք: Անվտանգությունը և մակնշումը՝ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված: Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից 2020

թվականի 1-ին և 2-րդ եռամսյակներում ներկայացված պահանջագրերի հիման վրա՝ երեխաների հաճախումներին համապատասխան: 1-ին փուլով մատակարարումն իրականացվում է ձեռքբերվող ապրանքի ներկայացված քանակի 7%-ի չափով:

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ղեկավարի կողմից 16.01.2020թ.-ին Մասնակցին ուղղված թիվ 61 գրության համաձայն՝ Մասնակցին տեղեկացրել են, որ 2020 թվականի հունվարի 13-ին համայնքի ՆՈՒՀ-երից տեղեկություն է ստացվել 2020 թվականի հունվարի 10-ին մատակարարված սննդի՝ կարագի կասկածելի տեսակի մասին:

Համաձայն սննդի մատակարարման գնման 2019 թվականի դեկտեմբերի 19-ին կնքված ՍՄՍՀ-Գ<ԱՊՁԲ-20/1-1.1 պայմանագրի և ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1925 որոշման՝ մատակարարը պարտավոր է մատակարարման պայմանագրում նշված չափորոշիչներին, կաթի և կաթնամթերքի մակնանշմանը և փաթեթավորմանը ներկայացվող պահանջներին համապատասխան ապրանք մատակարարել:

Նույն գրությամբ նշվել է նաև, որ Մասնակցի կողմից ներկայացված սերտիֆիկատում նշված արտադրողի անունը և ապրանքի անվանումը չի համապատասխանում մատակարարված կարագի արկղի վրա գրվածին, ինչպես նաև նշված չէ արտադրման ամսաթիվը, իսկ ներկրողի տվյալները փակցված են արտադրողի պիտակի վրա: Վերը նշվածները կասկածներ են առաջացրել ՆՈՒՀ-ի տնօրենի մոտ առ այն, որ կարագի որակը, փաթեթավորումը և ժամկետները չեն համապատասխանում պայմանագրով նախատեսվածին:

Վերոգրյալներով պայմանավորված խնդրել են սեղմ ժամկետում տալ պարզաբանում:

ՀՀ ԿԵ ՍԱՏՄ «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբարատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ Սննդամթերքի անվտանգության փորձարկման լաբորատորիայի կողմից 24.01.2020թ.-ին կազմված թիվ 125 փորձարկման արձանագրության (այսուհետ նաև՝ Փորձարկման արձանագրություն) համաձայն՝ փորձարկման նմուշ համարվող «կարագ»-ը (բուսական յուղի առկայությամբ) չի համապատասխանում ՄՄ 033/2013 տեխնիկական կանոնակարգի 5-րդ կետի 24 պարբերությամբ սահմանված «կարագ կովի կաթից» ապրանքատեսակի բնութագրին և անվանմանմանը:

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ղեկավարի կողմից 03.02.2020թ.-ին Մասնակցին ուղղված թիվ 191 գրության համաձայն՝ մատակարարված կարագը չի համապատասխանում 1կգ-ն 4549,85 դրամին համարժեք կարագի որակին, ըստ սննդի մատակարարման գնման 2019 թվականի դեկտեմբերի 19-ին կնքված ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.1 պայմանագրի, ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1925 որոշման և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածին համապատասխան նշված չափորոշիչներին՝ կաթի և կաթնամթերքի անվտանգությանը, մակնանշմանը և փաթեթավորմանը ներկայացվող պահանջներին: Պայմանագրով նախատեսված է՝ «Անդրյուշևսկի կարագ-պանիր գործարան» ՍՊԸ կարագ՝ սերուցքային, յուղայնությունը՝ 71,5-82,5%, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը՝ 0,7գ, ածխաջուր՝ 0.7գ, 740 կկալ 200-250գ կամ 20-25կգ գործարանային փաթեթներով, ԳՈՍՏ 37-91 կամ համարժեք:

Հավելել են, որ Մասնակցի կողմից ներկայացված սերտիֆիկատում նշված արտադրողի անունը՝ «Սվետլովոդսկի», իսկ ապրանքի անվանումը՝ «Դիվո» ապրանքանիշի «Կրեստյանսկոյե» 72,5% կարագ, չի համապատասխանում մատակարարված կարագի արկղի վրա գրվածին, ինչպես նաև նշված չէ արտադրման ամսաթիվը, իսկ ներկրողի տվյալները փակցված են արտադրողի պիտակի վրա: Ակնհայտ է, որ կարագի որակը, փաթեթավորումը և ժամկետները չեն համապատասխանում պայմանագրով նախատեսվածին, ինչը հաստատվել է նաև ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից:

Խնդրել են սեղմ ժամկետում տալ պարզաբանում, թե ինչ՞ու ՆՈՒՀ-երին մատակարարված կարագի տեսականին չի համապատասխանում վերը նշված պայմանագրի պահանջներին, ինչպես նաև մատնանշել ապրանքի՝ կարագի ձեռք բերման աղբյուրը և հիմնավորող փաստաթղթերը:

www.gnumner.am համացանցային կայքում 11.02.2020թ.-ին հրապարակված թիվ «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1» պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ Սյունիքի մարզ Սիսիանի համայնքապետարանի և «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ի միջև 19.12.2019թ.-ին կնքված թիվ «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.1», «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.2», «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.3», «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.4» ծածկագրերով գնման պայմանագրերը ՀՀ Սյունիքի մարզ Սիսիանի համայնքապետարանի կողմից 10.02.2020թ.

միակողմանի մասնակի թիվ 20 չափաբաժնի (կարագ) լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7 և 2.1.7.1 կետերի ուժով (մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.02.2020թ. թիվ 26/26-1/2217-2020, 26/26-1/2214-2020, 26/26-1/2274-2020 և 26/26-1/2283-2020 գրություններով «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների,

աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են երկու օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ Սյունիքի մարզ Սիսիանի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ի միջև 19.12.2019թ.-ին կնքված թիվ «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.1», «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.2», «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.3» և «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.4» ծածկագրով պետական գնման պայմանագրերի հավելված 1-ով 20-րդ չափաբաժնի մասով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է մատակարարման ենթակա «կարագ» ապրանքատեսակը պետք է լինի՝ Սերուցքային, յուղայնությունը՝ 71,5-82,5%, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0,7 գ, ածխաջուր 0,7 գ, 740 կկալ 200-250 գ կամ 20-25 կգ գործարանային փաթեթներով,

ԳՕՍՏ 37-91 կամ համարժեք: Անվտանգությունը և մակնշումը՝ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված: Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից 2020 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակներում ներկայացված պահանջագրերի հիման վրա՝ երեխաների հաճախումներին համապատասխան: 1-ին փուլով մատակարարումն իրականացվում է ձեռքբերվող ապրանքի ներկայացված քանակի 7%-ի չափով:

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ղեկավարի կողմից 16.01.2020թ.-ին Մասնակցին ուղղված թիվ 61 գրության համաձայն՝ Մասնակցին տեղեկացրել են, որ 2020 թվականի հունվարի 13-ին համայնքի ՆՈՒՀ-երից տեղեկություն է ստացվել 2020 թվականի հունվարի 10-ին մատակարարված սննդի՝ կարագի կասկածելի տեսակի մասին:

Համաձայն սննդի մատակարարման գնման 2019 թվականի դեկտեմբերի 19-ին կնքված ՍՄՍՀ-Գ<ԱՊՁԲ-20/1-1.1 պայմանագրի և ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1925 որոշման' մատակարարը պարտավոր է մատակարարման պայմանագրում նշված չափորոշիչներին, կաթի և կաթնամթերքի մակնանշմանը և փաթեթավորմանը ներկայացվող պահանջներին համապատասխան ապրանք մատակարարել:

Նույն գրությամբ նշվել է նաև, որ Մասնակցի կողմից ներկայացված սերտիֆիկատում նշված արտադրողի անունը և ապրանքի անվանումը չի համապատասխանում մատակարարված կարագի արկղի վրա գրվածին, ինչպես նաև նշված չէ արտադրման ամսաթիվը, իսկ ներկրողի տվյալները փակցված են արտադրողի պիտակի վրա: Վերը նշվածները կասկածներ են առաջացրել ՆՈՒՀ-ի տնօրենի մոտ առ այն, որ կարագի որակը, փաթեթավորումը և ժամկետները չեն համապատասխանում պայմանագրով նախատեսվածին:

Վերոգրյալներով պայմանավորված խնդրել են սեղմ ժամկետում տալ պարզաբանում:

ՀՀ ԿԵ ՍԱՏՄ «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբարատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի Սննդամթերքի անվտանգության փորձարկման լաբորատորիայի կողմից 24.01.2020թ.-ին կազմված թիվ 125 փորձարկման արձանագրության (այսուհետ նաև՝ Փորձարկման արձանագրություն)

համաձայն՝ փորձարկման նմուշ համարվող «կարագ»-ը (բուսական յուղի առկայությամբ) չի համապատասխանում ՄՄ 033/2013 տեխնիկական կանոնակարգի 5-րդ կետի 24 պարբերությամբ սահմանված «կարագ կովի կաթից» ապրանքատեսակի բնութագրին և անվանմանմանը:

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ղեկավարի կողմից 03.02.2020թ.-ին Մասնակցին ուղղված թիվ 191 գրության համաձայն՝ մատակարարված կարագը չի համապատասխանում 1կգ-ն 4549,85 դրամին համարժեք կարագի որակին, ըստ սննդի մատակարարման գնման 2019 թվականի դեկտեմբերի 19-ին կնքված ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.1 պայմանագրի, ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1925 որոշման և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածին համապատասխան նշված չափորոշիչներին՝ կաթի և կաթնամթերքի անվտանգությանը, մակնանշմանը և փաթեթավորմանը ներկայացվող պահանջներին: Պայմանագրով նախատեսված է՝ «Անդրյուշևսկի կարագ-պանիր գործարան» ՍՊԸ կարագ՝ սերուցքային, յուղայնությունը՝ 71,5-82,5%, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը՝ 0,7գ, ածխաջուր՝ 0.7գ, 740 կկալ 200-250գ կամ 20-25կգ գործարանային փաթեթներով, ԳՈՍՏ 37-91 կամ համարժեք:

Հավելել են, որ Մասնակցի կողմից ներկայացված սերտիֆիկատում նշված արտադրողի անունը՝ «Սվետլովոդսկի», իսկ ապրանքի անվանումը՝ «Դիվո» ապրանքանիշի «Կրեստյանսկոյե» 72,5% կարագ, չի համապատասխանում մատակարարված կարագի արկղի վրա գրվածին, ինչպես նաև նշված չէ արտադրման ամսաթիվը, իսկ ներկրողի տվյալները փակցված են արտադրողի պիտակի վրա: Ակնհայտ է, որ կարագի որակը, փաթեթավորումը և ժամկետները չեն համապատասխանում պայմանագրով նախատեսվածին, ինչը հաստատվել է նաև ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից:

Խնդրել են սեղմ ժամկետում տալ պարզաբանում, թե ինչ՞ու ՆՈՒՀ-երին մատակարարված կարագի տեսականին չի համապատասխանում վերը նշված պայմանագրի պահանջներին, ինչպես նաև մատնանշել ապրանքի՝ կարագի ձեռք բերման աղբյուրը և հիմնավորող փաստաթղթերը:

www.gnumner.am համացանցային կայքում 11.02.2020թ.-ին հրապարակված թիվ «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1» պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝

ՀՀ Սյունիքի մարզ Սիսիանի համայնքապետարանի և «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ի միջև 19.12.2019թ.-ին կնքված թիվ «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.1», «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.2», «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.3», «ՍՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1.4» ծածկագրերով գնման պայմանագրերը ՀՀ Սյունիքի մարզ Սիսիանի համայնքապետարանի կողմից 10.02.2020թ. միակողմանի մասնակի թիվ 20 չափաբաժնի (կարագ) լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7 և 2.1.7.1 կետերի ուժով (մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք):

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ գործում առկա փաստերով (գրագրություններով) չի հիմնավորվում, որ Պատվիրատուն, ստանալով Փորձարկման արձանագրությամբ հաստատված տվյալները, 03.02.2020թ.-ին Մասնակցին ուղղված թիվ 191 գրությամբ, տեղեկացնելով վերջինիս կողմից մատակարարված «կարագ» ապրանքատեսակի Պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին չհամապատասխանելու փաստի մասին, տրամադրել է ողջամիտ ժամկետ, որպես Պատվիրատուի համար ընդունելի ժամկետ՝ ապրանքը Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանեցնելու համար: Այս փաստի առկայության պարագայում, միայն հնարավոր կլիներ փաստել Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետով սահմանված դրույթների կիրառման մասին, որն էլ, իր հերթին, կհանգեցներ ժամկետների խախտմանը և դրանով պայմանավորված՝ հետագայում էլ (սույն ընթացակարգի քննության ժամանակ) հնարավոր լիներ գնահատելու Պատվիրատուի գործողությունների օրինաչափությունը, և վերջապես գնահատելու Մասնակցի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորության խախտման փաստը:

Ընդ որում՝ պետք է փաստել, որ Պայմանագրի 2.1.2 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի, եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք,

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուն Փորձարկման արձանագրության տվյալների հիման վրա մասնակցին չի տրամադրել ողջամիտ ժամկետ՝ մատակարարված անպատշաճ որակի ապրանքը Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում փոխարինելու համար, որիպիսի պայմաններում խախտվել են Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետով սահմանված դրույթների պահանջները, իսկ նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.02.2020թ. թիվ 26/26-1/2217-2020, 26/26-1/2214-2020, 26/26-1/2274-2020 և 26/26-1/2283-2020 գրություններով «Սիսիանի Հաց»

ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/52 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**